ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԵԹԿՊԻ ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով ընթացակարգի

բացման նիստի

ք. Երևան 27.11.2017թ.

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ	Վահան Եղիազարյան
անդամներ	Հենրիետա Նալբանդյան
	Նառա Ղալումյան
քարտուղար	Արմինե Ազարյան

1. Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց, որ գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների գինը՝ 280000 դրամ է:

Ընթացակարգին հայտ է ներկայացրել

«Տպարան» ՍՊԸ-ն, հասցե՝ ք. Կոտայքի մարզ, գ. նոր Գյուղ, 1-ին փող., 3-րդ արտադրական բազա, հեռ. 060-65 66 67:

Հանձնաժողովը գնահատեց.

ա. Հայտեր պարունակող ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին,

Ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան:

բ. Բացված ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

«Տպարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում ներառված փաստաթղթերը, կազմված են բնօրինակից՝ 1 օրինակ, բացակայում է հրավերով պահանջված 1 օրինակ պատճեն: Փաստաթղթերի փաթեթի վրա նշված չէ «բնօրինակ» բառը:

Ընկերության կողմից որպես հայտի ապահովում ներկայացրած տուժանքի համաձայնությանը կցված չէ վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

2. Հաննձնաժողովը որոշեց.

«Տպարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժվում են՝ հաշվի առնելով, որ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Եղիազարյան Վահան

անդամներ՝ _____ Նալբանդյան Հենրիետա

_____ Նառա Ղալումյան

քարտուղար՝ _____ Արմինե Ազարյան